# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 13

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 27-ը փետրվարի 2019 թվականի թիվ 4 նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 27-ը փետրվարի 2019 թվականի թիվ 4 նիստի օրակարգը հաստատելու մասին,

2. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, նախկին հիվանդանոցի՝ ներկայիս բազմաբնակարան շենքից Խաչիկ գյուղի բնակիչներ Սոֆիկ Վաղինակի Աբրահամյանին, Անահիտ Լևոնի Բադալյանին և Լազր Սեդրակի Ղազարյանին համապատասխանաբար 36.78քմ., 58.24քմ. 37.92 քմ. մակերեսներով բնակարանները նվիրատվության կարգով տրամադրելու մասին,

3. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 06.12.2018թվականի թիվ 116 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին

4. Արենի համայնքի Արփի, Խաչիկ և Ռինդ բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող 0.015հա, 0.15հա, 2.3373հա և 0.014902հա հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին

5. Արենի համայնքի Արենի և Աղավնաձոր բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից աճուրդով օտարելու համաձայնություն տալու մասին,

6. Արենի համայնքի Արենի բնակավայրի վաչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.02հա կապի նշանակության

հողամասը մրցույթով, վարձակալությամբ հատկացնելու համաձայնություն տալու մասին

7. Արենի համայնքի ավագանու 15.12.2017թվականի թիվ 55-Ն որոշման մեջ փոփոխութուններ և լրացումներ կատարելու մասին,

8. Արենի համայնքի Արենի բնակավայրի նախկին բնակիչ՝ հանգուցյալ Ժենիկ Խաչատուրի Գրիգորյանի հուղարկավորությունը կազմակերպելու համար Արենի գյուղի բնակիչ Մարիետա Պարույրի Պարսամյանին դրամական օգնություն հատկացնելու մասին,

9. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.0225հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու համաձայնություն տալու մասին:

10. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկաների օգտագործման կարգը և սակագները հաստատելու մասին

11. Արենի համայնքի ավագանու 28.12.2018թվականի թիվ 132 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2019 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

12. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի տարեվերջյան գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

13. Արենի համայնքի 2019 թվականի Տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ) հաստատելու մասին

14. Արենի համայնքի ղեկավարի 2018թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 14

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ՍՈՖԻԿ ՎԱՂԻՆԱԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ԼԵՎՈՆԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ԵՎ ԼԱԶՐ ՍԵԴՐԱԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ՝ ՆԵՐԿԱՅԻՍ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ 36.78 Ք.Մ., 58.24 Ք.Մ. ԵՎ 37.92 Ք.Մ. ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և «Քաղաքացիական օրենսգրքի» 594-րդ հոդվածի պահանջներով, և հաշվի առնելով Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի բնակիչներ Սոֆիկ Վաղինակի Աբրահամյանի, Անահիտ Լևոնի Բադալյանի և Լազր Սեդրակի Ղազարյանի դիմումները՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի խաչիկ բնակավայրի նախկին հիվանդանոցի՝ ներկայիս բազմաբնակարան շենքից 36.78քմ ընդհանուր մակերեսով բնակարանը նվիրատվության կարգով տրամադրել Խաչիկ բնակավայրի բնակիչ Սոֆիկ Վաղինակի Աբրահամյանին:
2. Արենի համայնքի խաչիկ բնակավայրի նախկին հիվանդանոցի՝ ներկայիս բազմաբնակարան շենքից 58.24քմ ընդհանուր մակերեսով բնակարանը նվիրատվության կարգով տրամադրել Խաչիկ բնակավայրի բնակիչ Անահիտ Լևոնի Բադալյանին:
3. Արենի համայնքի խաչիկ բնակավայրի նախկին հիվանդանոցի՝ ներկայիս բազմաբնակարան շենքից 37.92 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը նվիրատվության կարգով տրամադրել Խաչիկ բնակավայրի բնակիչ Լազր Սեդրակի Ղազարյանին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**


Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 15

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06.12.2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 116 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, առաջին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության մարզպետին կից երիտասարդական խորհրդի կանոնադրության 8-րդ և 10-րդ կետերը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 06.12.2018 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդի կազմում ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին» թիվ 116 որոշումը,

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին կից երիտասարդական խորհրդի կազմում Արենի համայնքի կողմից, որպես խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրել Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչ Տարոն Արսենի Նազարյանի թեկնածությունը,

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 16

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓԻ, ԽԱՉԻԿ ԵՎ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.015ՀԱ, 0.014902ՀԱ 0.15ՀԱ ԵՎ 2.3373ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ և 31-րդ, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 3-րդ հոդվածի 1-ին կետերով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշումը, ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 14.01.2019 թվականի թիվ 2, 25.12.2018թվականի թիվ 160, 18.02.2019թվականի թիվ 8 և թիվ 9 դրական եզրակացությունները, Արենի համայնքի ավագանին ***որոշում է`***

1. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Արփի բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0,015 հա գյուղատնտեսական նշանակության (կադաստրային ծածկագիրը` 10-012-0156-0001) հողամասը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կատեգորիա` կապի հողեր գործառնական նշանակության:

2. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն. «Յուքոմ» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող 0,014902 հա գյուղատնտեսական նշանակության (կադաստրային ծածկագիրը` 10-025-0111-0100, գործառնական նշանակությունը` վարելահող) հողամասը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների կատեգորիա` կապի հողեր գործառնական նշանակության

2.1 Սույն որոշման երկրորդ կետը ուժի մեջ է մտնում հողի սեփականատեր «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից հողամասի նպատակային նշանակության փոփոխության

հետևանքով առաջացած հողի կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 11.847 (տասնմեկ հազար ութ հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ, վճարելուց և վճարման անդորրագիրը ներկայացնելուց հետո:

3. ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի Ռինդ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն.

3.1. Նաիրա Տերտերյանի սեփականություն հանդիսացող 59.47521 հա գյուղատնտեսական նշանակության (կադաստրային ծածկագիրը՝ 10-037-0112-0240, գործառնական նշանակությունը՝ արոտ) հողամասից 0.15հա հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության:

3.2. Նաիրա Տերտերյանի սեփականություն հանդիսացող 59.47521 հա գյուղատնտեսական նշանակության (կադաստրային ծածկագիրը՝ 10-037-0112-0240, գործառնական նշանակությունը՝ արոտ) հողամասից 2.3373հա հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

3.3. Սույն որոշման երրորդ կետը ուժի մեջ է մտնում հողի սեփականատեր Նաիրա Տերտերյանի կողմից հողամասերի նպատակային նշանակության փոփոխության հետևանքով առաջացած կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 5 061 655 (հինգ միլիոն վաթսունմեկ հազար վեց հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ, վճարելուց և վճարման անդորրագիրը ներկայացնելուց հետո:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ____________

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ____________

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ____________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ____________

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ____________

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 17

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԵՎ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 06.12.2018 թվականի թիվ 125 որոշումը Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող

1.1 Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.725758 հա (ծածկագիրը՝ 10-008-0184-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 500 %-ի չափով՝ 227.000 (երկու հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամ:

1.2 0.27803 հա (ծածկագիրը՝ 10-008-0179-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ կորիզավոր պտղատու այգի) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 95.920 (իննսունհինգ հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ:

1.3 0.83665 հա (ծածկագիրը՝ 10-008-0179-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ կորիզավոր պտղատու այգի) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 288.645 (երկու հարյուր ութսունութ հազար վեց հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ:

1.4 0.50554 հա (ծածկագիրը՝ 10-008-0179-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ հնդավոր պտղատու այգի) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 174.410 (մեկ հարյուր յոթանասունչորս հազար ճորս հարյուր տաս) ՀՀ դրամ:

1.5 2.4917 հա (ծածկագիրը՝ 10-008-0179-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 703.905 (յոթ հարյուր երեք հազար ինը հարյուր հինգ) ՀՀ դրամ:

1.6 0.5 հա (ծածկագիրը՝ 10-008-0179-, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խաղող) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 223.750 (երկու հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող.

2.1 2.40700 հա (ծածկագիրը՝ 10-006-0282-0036 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ ջրովի վարելահող) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 680 000 (վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

2.2 0.1 հա (ծածկագիրը՝ 10-006-0282-0034 նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ ջրովի վարելահող) հողամասը աճուրդով օտարելու համար: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 28250 (քսանութ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

3. Արենի համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1.5 և 2.1 կետերով նախատեսված հողամասերի աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցների հետ նոտարական վավերացմամբ կնքել պայմանագիր՝ համաձայն որի հաղթող ճանաչված անձիք պարտավորվում են երեք տարվա ընթացքում հողամասերի վրա հիմնել բազմամյա տնկարկներ, այլապես հողամասերը անհատույց հետ են վերադարձվում համայնքին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 18

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.02ՀԱ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Արենի համայնքի ավագանու 06.12.2018թվականի թիվ 125 որոշումը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն՝

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող.

1) 0.02 հա հողամասը (ծածկագիրը՝ 10-008-265-0074, նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ կապի հողեր, հասցեն՝ Արենի համայնք, գ. Արենի, 2փ., թիվ 40) մրցույթով, 10 տարի ժամկետով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 1%-ից ոչ պակաս՝ 180000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ մեկ տարվա համար:

2) Արենի համայնքի ղեկավարին. հաշվի առնելով Արենի համայնքի զարգացման հեռանկարները, մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի հետ նոտարական վավերացմամբ կնքել պայմանագիր, համաձայն որի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց երկու տարի հետո մրցույթի արդյունքում ձևավորված վարձավճարը կրկնապատկվում է:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ________

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ________

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ ______________________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ______________________

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ______________________

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ______________________

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ______________________

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ______________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 19-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.12.2017 ԹՎԱԿԱՆԻ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 26-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ, 34-րդ հոդվածի առաջին մասերի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի ավագանու 15 դեկտեմբերի 2017 թվականի «ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 30-ը նոյեմբերի 2014 թվականի թիվ 26-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 55-Ն որոշման հավելվածի 18-րդ կետից հետո ավելացնել նոր 19-րդ կետ՝ հետևյալ խմբագրությամբ.

19. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում յուրաքանչյուր ծնունդի կամ մահվան դեպքում սահմանվում է միանվագ դրամական օգնություն 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: Նշված վճարումը կատարվում է համապատասխան վկայականի առկայության դեպքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման և հրապարակման պահից և տարածվում է 2019թվականի հունվարի 1-ից հետո բոլոր ծննդի կամ մահվան դեպքերի վրա:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ ____________

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ ____________

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ ____________________

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ____________________

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ ____________________

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ ____________________

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ ____________________

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 20

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ԲՆԱԿԻՉ՝ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԺԵՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՄԱՐԻԵՏԱ ՊԱՐՈՒՅՐԻ ՊԱՐՍԱՄՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի և Արենի համայնքի ավագանու 15 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 55-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Արենի համայնքի Արենի բնակավայրի բնակիչ Մարիետա Պարույրի Պարսամյանի դիմումը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի Արենի բնակավայրի նախկին բնակիչ, հանգուցյալ Ժենիկ Խաչատուրի Գրիգորյանի հուղարկավորությունը կազմակերպելու համար հանգուցյալի հարսին՝ Մարիետա Պարույրի Պարսամյանին, հատկացնել դրամական օգնություն 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 21

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0225 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի Մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կառավարության «ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի գյուղական համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» թիվ 1595-Ն որոշմամբ հաստատված Արենի համայնքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն.

Արենի համայնքի սեփականությունը հանդիսացող 0.02250 հա ընդհանուր մակերես ունեցող հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ, կադաստրային ծածկագիրը՝ 10-008-0046-) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՄԱՐՏԻ 2019թվականի N 22

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, սույն որոշման հավելված 1-ում առկա գյուղատնտեսական տեխնիկան սահմանված գներով վարձակալությամբ տրամադրելու համար:
2. Սահմանել գյուղատնտեսական տեխնիկաներով մատուցվող ծառայությունների առավելագույն գները համաձայն սույն որոշման հավելված 2-ի:
3. Առաջարկել համայնքի ղեկավարին վարձակալի հետ կնքել պայմանագիր, համաձայն որի՝

ա) ավագանու կողմից սահմանված առավելագույն գներից ավել իրավունք չունի բնակչությանը մատուցել ծառայություններ,

բ) համայնքի ղեկավարի կարգադրությամբ աշխատակազմից նշանակել պատասխանատու անձ, որը առնվազը 10 օրը մեկ կկատարի շրջայց՝ տեխնիկաների տեխնիկական վիճակը ուսումնասիրելու և հետևելու համար,

գ) համայնքի ազգաբնակչությունից գրավոր դիմում-բողոքներ ստանալու դեպքում, կազմել ուսումնասիրող հանձնաժողով և բողոքը հավաստի լինելու դեպքում լուծել վարձակալության պայմանագիրը,

դ) Սահմանել, որ տեխնիկաներով ծառայությունները մատուցել բացառապես համայնքի ազգաբնակչությանը՝ համայնքի տարածքում: Համայնքի տարածքից դուրս ծառայություններ մատուցելու համար,համայնքի ղեկավարի հետ լրացուցիչ կնքել գրավոր համաձայնագիր ՝ սահմանելով լրացուցիչ վարձավճար:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**Հավելված 1**
**Արենի համայնքի ավագանու**
**27.02.2019 թ.-ի թիվ 22 որոշման**

| | բնակավայրը | Տեխնիկայի անվանում | Մակնիշը, պետհամարանիշը Արտադրման տարեթիվը և նկարագիրը | Քանակ /հատ/ | Վարձավճարի չափը ամսեկան դրամ | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Արենի | Տրակտոր Բելառուս | МТЗ 82.1, գործ. համարը՝ Y4R900201J1108621, տարեթիվ՝ 2018թ, գույնը՝ կապույտ, պետ. համարանիշ՝ 3282LS | 1 | 150.000 | |
| 2. | Արենի | Տրակտոր Բելառուս | МТЗ 921. գործ. համարը՝ 90601341, տարեթիվը՝ 2018թ., գույնը կարմիր, համարանիշ՝ 3281LS | 1 | 150.000 | |
| 3. | Արենի | Սրսկիչ | TAD-LEN, տարեթիվ՝ 2018թ | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է տրակտորին |
| 4. | Արենի | Գութան | ПКМП-3, տարեթիվ՝ 2018թ | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է տրակտորին |
| 5. | Արենի | Հնձիչ կախովի | БЕЛКА КС-210, տարեթիվ՝ 2018թ | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է տրակտորին |
| 6. | Արենի | Կցասայլ | բեռնատարողությունը 2000կգ, տարեթիվ՝ 2018թ | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է տրակտորին |
| 7. | Խաչիկ | Տրակտոր Բելառուս | МТЗ 82.1, գործ. համարը՝ 808225915, տարեթիվ՝ 2017թ, գույնը՝ կապույտ, պետ. համարանիշ՝ 3283LS | 1 | **80 000** | |
| 8. | Խաչիկ | Խոտ մամլիչ | ППТ-041 Tukan | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է տրակտորին |
| 9. | Խաչիկ | Ռոտորային փոցխ | ГР-700П | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է տրակտորին |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10. | Խաչիկ | Գութան | ПЛН-3-35П | 1 | | |
| 11. | Խաչիկ | Ծարքացան | СЗУ-3.6 | 1 | | |
| 12. | Խաչիկ | Խոտհնձիչ կախովի | КС-Ф-2.1Б | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է տրակտորին |
| 13. | Խաչիկ | Խոտ հնձիչ | 9/121 GE | 1 | 50 000 | |
| 14. | Խաչիկ | Մոտոբլոկ | НЕВА МБ2-С7,5 PRO | 1 | 80 000 | |
| 15. | Խաչիկ | Կցասայլակ | НЕВА | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է մոտոբլոկին |
| 16. | Խաչիկ | Կցագործիք խոտհնձիչ | НЕВА | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է մոտոբլոկին |
| 17. | Խաչիկ | Բուկլից 2 խոփով | НЕВА | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է մոտոբլոկին |
| 18. | Խաչիկ | Գութան | НЕВА | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է մոտոբլոկին |
| 19. | Խաչիկ | Կցամաս ունիվերսալ | НЕВА | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է մոտոբլոկին |
| 20. | Խաչիկ | կարտոֆիլահան | НЕВА | 1 | | Համաձայն պայմանագրի կցվում է մոտոբլոկին |
| **Ընդամենը** | | | | **20** | | |

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

հավելված 2

Արենի համայնքի ավագանու
27.02.2019թ-ի թիվ22 որոշման

| Հ/Հ | Ծառայության անվանումը | միավորը | շուկայական գործող գին դրամ | համայնքի ավագանու կողմից առաջարկվող առավելագույն գին դրամ | ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | խոտի հակավորում | հատ | 60 | 40 | թելը և դիզ. վառելիքը տրամադրում է բնակիչը |
| 2 | վար բաց տարածությունում | հա | 40000 | 30000 | դիզ. վառելիքը ներառյալ |
| 3 | վար բաց տարածությունում Խաչիկ բնակավայր | հա | 30000 | 25000 | դիզ. վառելիքը ներառյալ |
| 4 | խոտհունձ տրակտորով | հա | 25000 | 20000 | դիզ. վառելիքը ներառյալ |
| 5 | խոտհունձ տրակտորով Խաչիկ բնակավայր | հա | 20000 | 15000 | դիզ. վառելիքը ներառյալ |
| 6 | շարքացան Խաչիկ բնակավայր | հա | 12000 | 10000 | դիզ. վառելիքը ներառյալ |
| 7 | փոցխ Խաչիկ բնակավայր | հա | 11000 | 9000 | դիզ. վառելիքը ներառյալ |
| 8 | խաղողի այգիների վար | հա | 50000 | 30000 | դիզ. վառելիքը ներառյալ |
| 9 | կուլտիվացիա | հա | 150000 | 130000 | վառելիքը ներառյալ |
| 10 | խոտհունձ մոտոբլոկով | հա | 50000 | 40000 | վառելիքը ներառյալ |
| 11 | բեռնափոխադրում | կմ | 500 | 300 | վառելիքը ներառյալ, նվազագույն վարձավճարը 1000 դրամ |
| 12 | այգիների սրսկում | հա | 20000 | 15000 | վառելիքը ներառյալ |

* Մատուցվող լրացուցիչ ծառայությունների արժեքները կարգավորվում են ըստ կողմերի միջև կնքված պայմանագրի հավելվածների

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 23

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.12.2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 132 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ավագանու 28 դեկտեմբերի 2018 թվականի թիվ 132 որոշումը:

2. Հաստատել 2019 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մարտի 1-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված
ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու
2019 թվականի փետրվարի 27-ի թիվ 23 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

**Աշխատակիցների թվաքանակը՝ 68**

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ | ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ | ԾԱԾԿԱԳԻՐԸ |
|---|---|---|---|---|---|---|
| | ***ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ*** | | | | | |
| 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 1 | 260,000 | 260,000 | |
| 2 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 1 | 230,000 | 230,000 | |
| 3 | Համայնքի ղեկավարի մամուլի խոսնակ | 1 | 1 | 150,000 | 150,000 | |
| 4 | Ելփին բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| 5 | Չիվա բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| 6 | Ռինդ բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| 7 | Խաչիկ բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| 8 | Արփի բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| 9 | Աղավնաձոր բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 240,000 | 240,000 | |
| 10 | Գնիշիկ բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 170,000 | 170,000 | |
| 11 | Ագարակաձոր բնակավայրի վարչական ղեկավար | 1 | 1 | 220,000 | 220,000 | |
| | ***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ*** | | | | | |
| 12 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 1 | 300,000 | 300,000 | 1.2-1 |
| 13 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 220,000 | 220,000 | 2.3-1 |
| 14 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 220,000 | 220,000 | 2.3-2 |
| 15 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 220,000 | 220,000 | 2.3-3 |
| 16 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 1 | 220,000 | 220,000 | 2.3-4 |
| 17 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-1 |
| 18 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-2 |
| 19 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-3 |
| 20 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-4 |
| 21 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-5 |
| 22 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-6 |
| 23 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-7 |
| 24 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-8 |
| 25 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-9 |
| 26 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 1 | 195,000 | 195,000 | 3.1-10 |
| 27 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-1 |
| 28 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-2 |
| 29 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-3 |
| 30 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-4 |
| 31 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-5 |
| 32 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-6 |
| 33 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 1 | 120,000 | 120,000 | 3.2-7 |
| 34 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 100,000 | 100,000 | 3.3-1 |
| 35 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 100,000 | 100,000 | 3.3-2 |
| 36 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 100,000 | 100,000 | 3.3-3 |
| 37 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 1 | 100,000 | 100,000 | 3.3-4 |
| | ***ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ*** | | | | | |
| 38 | Հավաքարար | 7.5 | 11 | 78,000 | 585,000 | |
| 39 | Գիշերային պահակ | 2 | 2 | 72,800 | 145,600 | |
| 40 | Համայնքի ղեկավարի վարորդ | 1 | 1 | 180,000 | 180,000 | |
| 41 | Գործավար | 1 | 1 | 100,000 | 100,000 | |
| | ***Այլ պայմանագրային աշխատողներ*** | | | | | |
| 42 | Անասնաբույժ | 2 | 2 | 78,000 | 156,000 | |
| 43 | Անասնաբույժ | 5 | 5 | 72,800 | 364,000 | |
| 44 | Ռինդ և Չիվա բնակավայրերի անասնաբույժ | 1 | 1 | 100,000 | 100,000 | |
| 45 | Մշակութային միջոցառումների կազմակերպիչ | 4 | 6 | 78,000 | 312,000 | |
| 46 | Արենի համայնքի մշակութային միջոցառումների կազմակերպիչ | 1 | 1 | 150,000 | 150,000 | |
| 47 | Արենի համայնքի սպորտային միջոցառումների կազմակերպիչ | 1 | 1 | 150,000 | 150,000 | |
| | **Ընդամենը** | **62.5** | **68** | **7,779,600** | **8,982,600** | |

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 24

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի 2018 թվականի տարևերջյան գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն սույն որոշման 1-9 հավելվածների:

Կողմ -8 Դեմ -1 Ձեռնպահ 0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 25

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ (ՏԱՊ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 26

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի՝

ա) մուտքային մասով՝ 360 346.9 հազար դրամ, կամ 98.62 %

սեփական մուտքեր՝ 94 420.7 հազար դրամ, կամ 94.9 %

բ) ծախսային մասով՝ 376 420.8 հազար դրամ, կամ 88.2 %

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԶԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ԾԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ